



Press Release

Armenian Catholicosate, PO Box 70 317, Antelias – Lebanon Tel.: (+961-4) 523 461/2, 410 001/3, Fax: (+961-4) 419 724

E-mail: info@ArmenianOrthodoxChurch.org Website: <http://www.ArmenianOrthodoxChurch.org>

ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԻՆ 100-ԱՄԵԱԿԻ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵԶՐԱՓՈՒԿԵԼՈՎ

«ՄԵՆՔ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԿԸ ՊԱՅԱՆՁԵՆՔ ՑԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԵՆ»

Ըսաւ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՆԹԻԼԻԱՍ - Ատանայի Կոտորածի 100-Ամեակին նուիրուած Համագումարը, որ սկսած էր երէկ, Հինգշաբթի 29 Հոկտեմբեր 2009-ին, Անթիլիասի Սայրավանքին մէջ, այսօր՝ 30 Հոկտեմբերի առաւօտեան ժամը 9-էն սկսեալ շարունակեց իր նիստերը:

Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովանաւորութեամբ ու նախագահութեամբ տեղի ունեցող սոյն համագումարի երկրորդ օրուան նիստերը հետեւեալ հերթականութեամբ ընթացան:

Համագումարի Ե. նիստը յատկացուած էր Ջարդերն ու Կորուստները նիւթին, որու ընթացքին զեկոյցներով հանդէս եկան Հայկ Դեմոյեան (Երիտթուրքերու յեղաշրջումը եւ Ատանայի կոտորածները հոգեբանական լոյսի ներքոյ): Ան նախ շեշտեց ոչ միայն հայ, այլ առաջին հերթին օտար հեղինակներու ու ականատեսներու վկայութիւնները Ատանայի ջարդերուն մասին՝ ներկաներուն ուշադրութիւնը սեւեռելով ջարդերէն ետք եկող տարիներու երեք գործերու վրայ:

«Ատանայի աղէտը միջանկեալ փուլ էր համիտեան ջարդերի ու Հայոց ցեղասպանութեան միջեւ: Այդ ջարդը եկաւ ապացուցելու, որ վարչակարգերի փոփոխութիւնը օսմանեան Թուրքիայում չբերեց հայ ժողովրդի հանդէպ կայսրութեան վարած հայաջինջ քաղաքականութեան փոփոխութիւն», ըսաւ Դեմոյեան:

Հուրի Ազգեան ներկայացուց Երիտթուրքերը եւ Սուրիոյ հայկական կոտորածները 1909-ին նիւթը, իսկ Արամ Սեփէթեան՝ Չորք-Մարգպանի 1909ի ինքնատիպ ինքնապաշտպանութիւնը:

2. նիստի ընթացքին, որ շարունակութիւնն էր նախորդ նիստի թեմային, ներկայացուեցան եկեղեցական-հոգեւորական կորուստները Ատանայի ջարդին, Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական հայերու ընդհանուր պատկերով: Սեպուհ Արք. Սարգիսեան ներկայացուց Հայ Առաքելական եկեղեցւոյ կորուստը, Յ. Անդրանիկ Ծ. Վարդ. Կռանեան ներկայացուց Հայ Կաթողիկէ համայնքի կորուստը, իսկ Վեր. Յարութիւն Սելիմեան ներկայացուց Հայ Աւետարանական համայնքի կորուստը:

Յետմիջօրէին, Է. նիստը յատկացուած էր Ատանայի կոտորածին շուրջ ստեղծուած գրական գեղարուեստական գրականութեան, զոր ներկայացուց Սարգիս Կիրակոսեան: Յայտնենք, որ Սեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանէն լոյս սկսած են տեսնել շարք մը գիրքեր, ընդամենը հինգ ծաւալուն հատորներով, որոնց մէջ ի մի խմբուած են Ատանայի Կոտորածին վերաբերող բոլոր հին թէ նոր հրատարակութիւնները՝ վաւերագրեր, ականատեսի վկայութիւններ, օրագրութիւններ, գրական-գեղարուեստական էջեր եւայլն: Նշենք նաեւ, որ ՀԱՍԿ Հայագիտական տարեգրքի յաջորդ թիւը պիտի յատկացուի սոյն համագումարի ընթացքին ներկայացուած նիւթերուն, որոնք իրենց ամբողջութեան մէջ պիտի տրուին տարեգիրքի էջերով:

Ը. նիստը քաղաքական բնոյթ ունէր, որու ընթացքին քննարկումի նիւթ դարձաւ Կիլիկիոյ ջարդերէն մինչեւ Հայկական Ցեղասպանութիւն թեման: Այս նիւթին մասին երկու զեկուցաբերներն էին եղիկ ճերէճեան եւ Վիգէն Աւագեան:

Ի վերջոյ, փակման նիստի ընթացքին տեղի ունեցաւ ընդհանուր քննարկում եւ արժեւորում համագումարի, ինչպէս նաեւ եղան առաջարկներ յառաջիկայ համագումարներու առնչութեամբ:

Այնուհետեւ, մասնակիցները եւ հրաւիրեալները ունկնդրեցին Վեհափառ Հայրապետին եզրափակիչ պատգամը: Նորին Սրբութիւնը ըսաւ, որ Ատանայի ջարդերու 100-ամեակին առիթով կատարուած բոլոր ձեռնարկները՝ խաչքարի զետեղում, շուրջ 60 լուսանկարներու ցուցահանդէս եւ համագումար, եւ նմանօրինակ այլ նախաձեռնութիւններ կարելոր են «մեր հաւաքական յիշողութիւնը թարմացնելու համար»: Նման ձեռնարկներ, ինչպէս նաեւ հայ ժողովուրդի պատմութեան անդրադառնալը կարելոր են նաեւ անով, որ կարենանք գնահատել անցեալը եւ ճիշդ կողմնորոշուինք:

Արամ Ա. Կաթողիկոս ընդգծեց, որ Ցեղասպանութեան ճանաչման պայքարը պիտի շարունակուի, աւելին՝ այսուհետեւ հայ ժողովուրդը պետք է եւ ժամանակն է, որ ճանաչումէն բացի արծարծէ Ցեղասպանութեան հատուցման հարցը: «Մենք հատուցում կը պահանջենք Թուրքիայէն», ըսաւ Վեհափառ Հայրապետը:

Համագումարի փակումէն առաջ երկու լեզուներով՝ հայերէն եւ անգլերէն, ընթերցուեցաւ եզրափակիչ յայտարարութիւն, ապա Դարեվանքի երգչախումբը եւ համագումարի մասնակիցները, կատարեցին Կիլիկիոյ նուիրուած երգեր, որոնք ոչ միայն ողբ այլ յաղթանակ կ'արտայայտէին:

Յայտնենք, որ նոյն օրը կէսօրին Մայրավանքի սեղանատան մէջ ճաշկերոյթ մը տրուեցաւ բոլոր հրաւիրեալներուն եւ մասնակիցներուն, ներկայութեամբ Վեհափառ Հայրապետին, որու ընթացքին մտերմական մթնոլորտի մէջ շարունակուեցան արծարծուիլ համագումարի թեմաները, առանձնագրոյցներու ճամբով:

##

Տպագրելի նկարները՝ հոս.-

<http://www.ArmenianOrthodoxChurch.org/v04/doc/Photos/Photos414.htm>

Press Release

For Immediate Use - Catholicosate of Cilicia

Communication and Information Department

Contact: V.Rev.Fr.Krikor Chiftjian, Communications Officer

Tel: (+961- 4) 410001, 410003

Fax: (+961- 4) 419724

E- mail: info@ArmenianOrthodoxChurch.org

Web: www.ArmenianOrthodoxChurch.org

PO Box 70 317

Antelias-Lebanon